վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը):

Դատարանն արձանագրում է, որ «Աննարկա» ՍՊԸ-ի և «Ավետիսյան Լեգալ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի տնօրեն Միքայել Ավետիսյանի միջև 04.09.2024 թվականին կնքվել է հանձնարարության թիվ 09/24 պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ «Սույն հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է վճարել 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ (...):

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ, դիրքորոշում, միջնորդություններ, վերաքննիչ բողոք, գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն, ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով հայցվոր կողմի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 200.000 ՀՀ դրամ, ուստի պետք է ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ «Աննարկա» ՍՊԸ-ի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Աննարկա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի՝ թիվ «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/86» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու, գնման ընթացակարգը 9-րդ չափաբաժնով չկայացած համարելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից «ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/86» ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու, գնման ընթացակարգն 9-րդ չափաբաժնով չկայացած համարելու մասին գնահատող հանձնաժողովի

27.08.2024 թվականի որոշումները:

2. ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ «Աննարկա» ՍՊԸ-ի բռնագանձել 4.200 (չորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար և 8.400 (ութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

«Աննարկա» ՍՊԸ-ին վերադարձնել 126.600 (մեկ հարյուր քսանվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուսուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ «Աննարկա» ՍՊԸ-ի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ն. Ավետիսյան) 12.09.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am